Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 47

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բաղալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.06.2024թ. N 66-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Աշտարակի համայնքային սեփականության 2024թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

10. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կողմից Աշտարակ համայնքում իրականացվող աղբահանության գործունեության վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կոշի բազալտների հանքավայրի <<Հյուսիսային>> տեղամասի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

12. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների և ջրավազանի կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. Աշտարակ համայնքի Ուշի, Արտաշավան, Օշական և Նոր Երզնկա բնակավայրերում փողոցների և փակուղիների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

15. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

16. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

17. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

18. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38 հոդվածի առաջին մասի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2024 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի կատարողականը.

	Վարչական բյուջե	***Ֆոնդային բյուջե***	***Ընդամենը***
Եկամտային մաս	4606111.7	1953521.5	5409633.2
Ծախսային մաս	4367783.0	2088283.9	5306066.9

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *<<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.06.2024թ. N 66-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.06.2024թ. N 66-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թիվ 1 Մանուշակ մանկապարտեզ», «Աշտարակ քաղաքի թիվ 5 Արաքս Մուրադյանի անվան մանկապարտեզ» և «Աշտարակ համայնքի Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» և «Օշականի թիվ 9 Գայանե մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Ագարակ, Ավան, Արուճ, Բազմաղբյուր և Նոր Եդեսիա բնակավայրերում նոր մանկապարտեզի շենքերի կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աղձք, Բյուրական, Ոսկեվազ, Օհանավան, Ուշի և Սասունիկ բնակավայրերի մշակույթի տան շենքերի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Կոշի արվեստի դպրոց» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ քաղաքի Խաչատուր Աբովյան փողոցի հիմնանորոգում, բնական քարով սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների

իրականացում», «Աշտարակ քաղաքի կախովի կամուրջի հիմնանորոգում, դեպի կամուրջ տանող աստիճանների, լուսավորության համակարգի վերանորոգում և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու 88, Ն. Աշտարակեցու 78, Ա. Մանուկյան 17, Տ. Մեծի 18, Պռոշյան 13, Պռոշյան 9 բազմաբնակարան բնակելի շենքերի և Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի 32 փողոցի 2-րդ, 4-րդ, 33 փողոցի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3 Հովիկ մանկապարտեզի շենքի կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 4 բազմաբնակարան շենքերի էներգախնայող միջոցառումների՝ ջերմամեկուսացման, շքամուտքերի և տանիքների վերանորոգման աշխատանքների իրականացում» (այսուհետ՝ ծրագրեր) թվով՝ 11 սուբվենցիայի հայտերին՝ համաձայն հավելվածի:»:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի

քարտուղար Սամվել Սահակյան և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Աշտարակի համայնքային սեփականության 2024թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով, հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքներն՝ ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների: Հաստատել հանձնաժողովների կողմից դուրս գրման ներկայացված գույքի ցանկը /փաթեթը գտնվում է ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնում/:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին: Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին

ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Աշտարակ համայնքի 2025թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *<<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման հավելված 35-ը շարադրել նոր խմբագրությամբ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի ՀԿՀ-ին պատկանող NISSAN մակնիշի (տիպարը՝ TEANA 3.5) 888 CM 61 պետհամարանիշի մեքենան անհատույց օգտագործման նպատակով <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *<<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կողմից Աշտարակ համայնքում իրականացվող աղբահանության գործունեության վերաբերյալ համաձայնություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության և գյուղատնտեսության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի տնօրեն Է. Մելիքյանի ծանուցումը /մուտք՝ 05.12.2024թ. թիվ 13817/, հանրային լսման արդյունքը և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կողմից Աշտարակ համայնքում իրականացվող աղբահանության գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կոշի բազալտների հանքավայրի <<Հյուսիսային>> տեղամասի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ համաձայնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության և գյուղատնտեսության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով հանրային լսումներ կազմակերպելու վերաբերյալ <<ՎԱՆԴՈՇԻՆ>> ՍՊԸ տնօրեն Վ. Մանուկյանի 16.01.2025թ. թիվ 01/12 գրությունը, հանրային լսման արդյունքը և ղեկավարվելով <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի պահանջներով, նախնական համաձայնություն տալ Վերին Սասունիկ բնակավայրի տարածքում Կոշի բազալտների հանքավայրի <<Հյուսիսային>> տեղամասի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 31.01.2025թ. N 2/փ-46 և N 2/փ-47 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-113-0227-0091 ծածկագրով 0,06հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /0,05163հա-արոտավայր և 0,00837հա-վարելահող/ նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-001-0191-0011 ծածկագրից 0,000049հա, 0,00623հա և 0,003154հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Աշտարակ քաղաքի և Օշական բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների և ջրավազանի կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արշակ Հովհաննիսյանի 17.02.2025թ. N 1675 և Գոռ Սահակյանի 27.02.2025թ. N 2193 արտադրական նշանակության շենք-շինությունների և ջրային օբյեկտի կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի 02-095-0206-0036 ծածկագրով, Արշակ Ապրեսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 1,4հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հավանություն տալ Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրի 02-017-0140-0011 ծածկագրով, Գոռ Գագիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 1,7956հա մակերեսով հողամասից 0,4հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության՝ /ոռոգման նպատակով ջրավազանի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Աշտարակ համայնքի Ուշի, Արտաշավան, Օշական և Նոր Երզնկա բնակավայրերում փողոցների և փակուղիների համարակալման մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրի 2-րդ փողոց, 6-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, ՈՒշի բնակավայր, 2-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 3-րդ փակուղի:

2. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում գտնվող փողոցին տալ 10 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, 10-րդ փողոց:

3. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում գտնվող փողոցին տալ 43 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 43-րդ փողոց:

4. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Մ. Մաշտոցի փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 12 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Մ. Մաշտոցի փողոց, 12-րդ փակուղի:

5. ՈՒշի, Արտաշավան, Օշական և Նոր Երզնկա բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետին համապատասխան՝ համաձայնություն տալ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն:

Համայնքի ղեկավարին՝ նույն կարգի 10-րդ կետին համապատասխան՝ կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետին:

2. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ արոտները և խոտհարքները (բնական կերհանդակներ), վարձակալության տրամադրելիս վարձավճարները սահմանել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 898-Ն որոշմամբ հաստատված կադաստրային գները՝ համաձայն հավելվածի, նրանց նկատմամբ կիրառելով 2 գործակից:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը և խոտհարքները կարճաժամկետ վարձակալության տրամադրելիս պայմանագրերը կնքել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմանը համապատասխան՝ մարզպետի դրական եզրակացության առկայության դեպքում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Գևորգ Պապիկյանի 12.02.2025թ. N 1467, Արմինե Հակոբյանի 17.02.2025թ. N 1697, Արտակ Կիրակոսյանի 24.02.2025թ. N 1991, Կարեն Գալստյանի 27.02.2025թ. N 2165, Եղիշե Եղիշյանի 28.02.2025թ. N 2250 և Նշան Այվազյանի 28.02.2025թ. N 2251 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0658-0036 ծածկագրով 0,1836հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 5 000 000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0658-0013 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սեփականատեր Գևորգ Վոլոդյայի Պապիկյանին:

2. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 2-րդ փակուղի, N 5/1 հասցեում գտնվող, 02-068-0019-0032 ծածկագրով 147քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02068-0019-0130 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Արմինե Արամայիսի Հակոբյանին:

3. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոց, N 78/1 հասցեում գտնվող, 02-001-0844-0106 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 10քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0844-0012 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Արտակ Դերենիկի Կիրակոսյանին:

4. Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-110-0168-0019 ծածկագրով 0,0738հա հողամասը /խոտհարք/ ուղղակի վաճառքով՝ 600 000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-110-0168-0018, 02-110-0168-0020 և 02-110-0168-0026 ծածկագրերով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի սեփականատեր Կարեն Նորիկի Գալստյանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0447-0004 ծածկագրից 0,02858հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0447-0007 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սեփականատեր Եղիշե Աբգարի Եղիշյանին:

6. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արցախ թաղամաս, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, N 20/1 հասցեում գտնվող, 02-001-0742-0001 ծածկագրից, համայնքային սեփականություն հանդիսացող 380քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0742-0040 ծածկագրով բնակավայրերի

նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Նշան Նիկողոսի Այվազյանին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 17 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 18 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի ապրիլի 11-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2025 թվականի մարտի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____

ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____

ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ